ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

02 հոկտեմբերի 2020թ.

ՊՀ/510-98/3128-20

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԶՈՀՐԱԲՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Զոհրաբյան

Պաշտպանության նախարարին ուղղված 01.10.2020թ. Ձեր՝ 01/01/1805-20 դիմումի առնչությամբ հայտնում եմ, որ աշխատող և զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիներին ու գործատու հանդիսացող կազմակերպություններին ս.թ. հոկտեմբերի 1-ից տրվելու են այլ բովանդակությամբ ծանուցագրեր և ծանուցումներ, ինչպես նաև նախատեսվում է ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքում (124-րդ հոդված) փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագիծ, որի համաձայն զորահավաքային զորակոչի կանչված աշխատող քաղաքացու աշխատատեղը պահպանվում է նրա զորահավաքային զինվորական ծառայության ամբողջ ժամանակահատվածում, իսկ վարձատրությունն իրականացվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված կարգով:

Հայտնում եմ նաև, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն՝ զորահավաքային զորակոչի միջոցով ծառայություն անցնող զինծառայողների վրա տարածվում և նրանց հաշվարկվում է պայմանագրային զինծառայողների համար սահմանված դրամական ապահովությունը:

Հարգանքով՝ Ա. Սարգսյան

Invalid signature

ԱՐԹՈՒՐ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARTUR 3003790080

ՄՈՒՏՔ № 2120-20
06 10 2020թ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

Կատարող՝ Հ. Իսրայելյան
Հեռ.՝ 29-45-33